

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1845—1892



ՆՇԱՆԱՌՈՐ՝ տոհմային ազնուութեամբ
և հռչակուած՝ իր պարագլուխ հրապարա-
կախօս գրիչներու մէջ,
բառուրդ պարմիր իր հզօր
ազգեցութեան տակ կա-
ռավորեց, լուսաւորեց,
ցնցեց ժողովուրդը. ցա-
նեց իր մարքին սերմերը
համարձակ, յանդուգն
ազատամատութեամբ, և
ինքզինքը իրաւամբ ցոյց
տուաւ մշակ՝ ազգային
կրթութեան խապան գաշախն մէջ:

Գրիգորի պապը Գէորգ Արծրունի, վա-
նէն գաղթելով թիֆլիզի մէջ հաստատուած
էր¹. Եւրոպայի մեծ քաղաքներն ալ պաշ-
տած, վաճառական, հարուստ և լուսաւոր
մարդ էր. Ամսկերտամէջ հայերէն տառերու
մարդ էր բերելով, թիֆլիզի մէջ առաջին
սպարաւոր հաստատուած և սղաժ էր իր «Դա-
րաստան խրատուց» գիրքը: Գրիգորի հայրն
ալ՝ Երեմիա Արծրունի, քաղաքական պաշ-
տամանց մէջ նշանաւոր, խիստ բնաւորու-
թեամբ և պատկառելի անձ էր: Ուրյուցք
մէջ բաց Ի Գրիգորէն, Անդրէաս Արծրունի
եւս նշանաւոր եղաւ իր բնագիտական հմուտ-
ութեամբ:

Գրիգոր Արծրունի Մոսկուայի մէջ ծնաւ
1845ի փետրուար 27ին. հարուստ բնա-
նեաց զաւակ՝ դատախարակուհեաց և տնային
վարժապետաց ձեռքին մէջ սնաւ, ճասը

տարեկան՝ մօրէն զրկուած՝ հօրը հետ Գեր-
մանիա ուղեւորելով, լատիներէն և գերմա-
ներէն պատեր տաւ. զաղղիկներն ալ ման-
կութեան օրերուն մէջ սարվեցաւ դեռ ու-
սումնարան շմտած: Կը պատմուի թէ, դեռ
երախայ՝ Մոսկուայի մէջ, փոքրիկ Գրիգորը
զաղղիկներն լրագիր կը հրատարակէր, որուն
բաժանուորները իր մանկահասակ բոլորին
ու եղբայրներն էին: Տասներկու տարուան
թիֆլիզ վերադառնալով, հայերէն սկսաւ
սորվիլ. անկէ առաջ բառ մ'անգամ չէր
գիտեր: «Երբ հայերէնի վրայ խօսք կ'ըլլար,
կ'րո՛ւ էրեցեանց, անոնք (Գրիգոր և իր եղ-
բայրը Անդրէաս) հեղինական ժպիտով կը պա-
տախանէին, որ թէպէտ չեն խօսիր, բայց
բոլ մը կը հասկընան, և զիմնադիպի հա-
մար պէտք եղածին չափ գիտեն: Գրիգորը
կը սիրէր ծաղրել Պոլսէն մեր բերած Հայոց
գերատանական խմբի պատկերները, Հայք-
թատրոն, Հայք-թատրոն, բացազանչելով:
Կը ծիծաղէր երբ կը տեսնէր մեր ձեռքը որ
և է լրագիր, Մեղոյ կամ Մոսկոյ, շուտով
կը կանչէր Անդրէասը, հեղինական ժպիտով
կու տար թերթը անոր՝ բարձրաձայն ծիծա-
ղելով. տես հայք լրագիր ալ ունեցեր են,
կ'երեստանայեմ թէ ինչեր կը տպեն...»:

Տասն և ութ տարուան աւարտեց զիմնա-
գիտն, յաջորդ տարին Մոսկուայի համա-
լսարանին բնագիտական բաժինը մտաւ, և
տարի մը ետքը Պետրբուրգի համալսարա-
նին մէջ նոյն ձևովը շարունակեց: Հն
կանչեց նաեւ իր Անդրէաս եղբայրը, և նոյն
ատեն մաթրաքաղաքին մէջ Հայ երիտասարդ
ուսանողաց բաւական մեծ խումբ մը ձեւա-
ցած էր, որոնց մագիստրոս Կարապետ Ե-
զեանց բացած իր դռները, սիրովոր ընդ-
ունեւութեամբ կը մտնչէր իրենց պանդխտու-
թիւնը: Պետրբուրգ կը գտնուէր նոյն ժա-
մանակ երիտասարդ Գամառ-Քաթիպա և իր

1. Կենսագրական տեղեկութիւններ տուած
ենք հետեւեալ զրբերէն և թերթերէն, Ա. Ե-
րեցեանց «Ներթեր Հայոց պատմութեան հա-
մար. Ա. — Գ. Արծրունու և նրա ըստի հինգ
տարւայ պրական գործունէութեան առթիւ»:

1890: — Խ. Մալումեան «Մաքի Մշակը. Գ.
Արծրունու գրական գործունէութեան 23-ա-
մեակի առթիւ» . 1890: — Մշակ, 1892: —
Տարագ, 1892:

ծերունի հայրը Գրիգոր Արծրունի բնաւ
նեցաւ հայ խումբին, և ալ եւս հայ բլա-
ւոն վրայ առաջուան պէս չէր ծածկուի-
նոյն տարուան մէջ, 1865ին, առաջին ան-
գամ գրել սկսաւ Մեղու Հայաստանի լրա-
գրին մէջ, և տարւոյն վերջը հիւանդութեան
պատճառով չիցցաւ գնաց, և հոն ձմերկով
անցաւ ի Զուիցերի, ուր նախ Յիւրիի և
յետոյ Ժորճի վի համալսարաններուն մէջ ա-
զատ ունկնդրութիւն կ'ընէր. և ինչպէս կը
տեսնուի իր յօդուածներու տակ նշանակած
թիւերէն և քաղաքներէն, նա շարունակեց
այս տեղերէն աշխատակցել Մեղուի և Հայ-
կական աշխարհի: 1867ին իրր ուսանող
մտաւ Հայտէլպէրի համալսարանին փիլի-
սոփայական բաժինը, իրեն մասնաճիւղ ըն-
տրելով քաղաքատնտեսական գիտութիւն-
ները, և երկու տարի վերջ քննութիւն տա-
լով, ստացաւ ուսուցչի վկայականը: Նոյն
տարին Փարիզ երթալով, հոն տեղի հա-
մալսարանի մէջ ալ մի քանի ամիս ըն-
քաղաքատնտեսական պատախօսութիւններ:
Փարիզէն Արծրունին եկաւ վիննա, ուր ամ-
բողջ ձմեռ մը անցուց, մէկ կողմէն Միւ-
խարհանց բով հայերէն սորվելով, միւս կող-
մէն համալսարանին պատախօսութեանց հե-
տեւելով: 1870ին վիննայի գալով, ուղեց
կատարելագործել իր մայրենի լեզուն, վեց
ամիս հայերէնի պատառաւ, Ռուսոյի Աբրա-
հայր Գերպ. Խոյնատիս կիւրեղեանէ, նոյն
տեսն ուսումնապետ Մուրատ-Ռափայէլեան
վարժարանի. իսկ տեղւոյնը Հ. Ղ. Ա-
լիշանի ձեռքէն էր. և Արծրունի երկար ատեն
վայելեց անոր ներկայութիւնը: Վիննայէն
վարդապետաւ Հայտէլպէրի, և տարի մը հա-
մալսարանին մէջ պարձեալ քաղաքատնտե-
սական պատախօսութեանց ունկնդիր եղաւ:

1871ին Արծրունի դարձաւ ի Թիֆլիզ,
ուր ժամանակ մը, առանց վարձատրութեան
պատասխանութիւն ըրաւ Հայոց օրիորդական
գալոցներուն մէջ, և նոյն իսկ քիչ մը ա-
տեն Փայիանեան և Մարիամեան պարոջնե-
րու տեսչի պաշտօնը վարեց: Մի և նոյն
թիւն ժամանակ կը շարունակէր գրել Մեղուի մէջ
«Նեօթէ» ստորագրութեամբ, իսկ Հայկական
աշխարհ և Պոլսոյ Մասիս լրագրաց մէջ ու-

այլ և այլ ուսերէն և վիճնայի «Journal
d'Orient», լրագրաց մէջ իր ստորագրու-
թեամբ կը գրէր:

Վերջապէս 1872ին հիմնեց Արծրունի
Թիֆլիզու մէջ Մշակ լրագիրը որ առաջ շա-
բաթթիւներով էր, 1876էն սկսեալ շաբաթի
երկու անգամ կը հրատարակուէր, իսկ
1878ին ամենօրեայ դարձաւ, շաբաթը հինգ
անգամ հրատարակուելով: 1884ին ընդ-
միջեց և Զուիցերի գնաց փաստաւած առող-
ջութիւնը հաստատելու, հոնկից կը գրէր
կ. Պոլսոյ Արևիկը լրագրին: Տարի մը վերջը
Թիֆլիզ գտնաւորով 1886ին նորէն սկսեալ
հրատարակել Մշակը որ ինն ամիս միայն
ընդհատեցաւ մահուանէն վերջ: 1889ին
Թիֆլիզի հառարակութեան կողմէն Փարիզ
գնաց ներկայ բլաւու «Գրողներու Ժողով-
քին» իր գրական գործունէութեան քան
և հինգամեկի առթիւ, 1890 մայիս 6ին,
փառաւոր յօրեկեան մը կատարեց հայ հա-
մարակութիւնը իր մեծ հրապարակախօսին:
Մեռաւ երկու տարի ետքը գեղեցիկ մի 19ին,
Թոքաթի իր հին հիւանդութեան, կար-
ճատեւ հարուածով մը:

Իննեւտասներորդ դարու գրականական
շարժման մէջ, մեծ պէր խաղաց Արծրունին
իր Մշակով. նա եւրոպական գաղափարնե-
րով գեղուն, չկրցաւ գոհանալ երկրորդական
միջոցներով հաղորդել իր լուսաւոր միտքը,
նա պէտք կը գգար գործել, և ազգու ոճով
Արլէն իսկ իրեն յատուկ բեմ մը, առանձին
լրագիր մը հրատարակելու գաղափարը ար-
տասահմանի մէջ յղացած էր. սակայն պէտք
էր շատ դժուարութեանց յաղթել:

Լրագրութիւնը նոյն ժամանակ ամենէն
ստոր գործն էր պարձած, հայ լրագիրը բարձր
դասուն համար չէր, անպատուութիւն էր
հայերէն թերթ ձեռք առնուլ..., հասարակ
ժողովուրդը չունէր բաւական գիտութիւն կամ
չէր հնարաքրքուր անոգուս խնդիրներով.
լրագիր մը հազիւ ծլած կը թառամէր, նոյն
իսկ գիտուն խմբագիր մը ձեռքին մէջ. զայս
չի հաստատել Հիւսիսատիպայի և այլ շատ
մը թերթիներու շուտով անշայտանալը: Ար-
ծրունիի լրագիր հրատարակելու գաղափարին
խոշորդոսն եղաւ իր հայրը և Յարաքեթու-

թիւնք շուտով կտրուեցան իրենց մէջ, Գրիգոր լմբոստացաւ, լրագրական աշխատանքը հրատապ էր, յամառ մնաց իր գաղափարին մէջ, որով գրիտեցաւ նոյն իսկ հօրը նիւթական օգնութիւններէ. երկար առան 100 ռուբլի միայն կը ստանար ամէն ամիս: Սակայն այս ոչինչ: Նա կը նետուի լրագրական ասպարէզ, ուր քաջագործութեան պէտքն կը զգար: Պէտք էր կոտել ժողովրդեան արիւնը ծծող մոլեռանդութեան, արմարութեան գիականացեալ ոգւոյն հետ: Կը գրէ Բաֆֆի. « Ես երբէք մոռանալ չեմ կարող 72 թուականը՝ երբ սկսիլեցաւ հրատարակվել «Մշակ» լրագիրը: Ի՞նչ կեանք էր տիրում այն ժամանակ թիֆլիզում: Բնչ գրութեան մէջ էր զաւանդելի վիճակը: — Ամեն տեղ տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն: Յանկարծ, կարծես մի գիթական գաւազանի հարուածից, զարթեցաւ կեանքը: Ոչ ոք չէր հաւատում, թէ այդպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքուած խմբագրատան մէջ, կարպուս էին, ծխում էին և վիճում էին: Մեզանից շատերը հանգնեցին շապիկ չունէին, մտնում էին այնտեղ բոլորովին պատառոտած կօշիկներով. այսու ամենայնիւ, մենք ամենքս էլ ֆատալիստի յուսով հաւատում էինք, թէ կը տիրապետենք մի մեծ ապագայի... »

Ես երբէք չեմ կարող մոռանալ այն աղմկալի ժողովները, որ կազմվում էին այդ լրագրի խմբագրատան մէջ մի քանի տարի առաջ: Եթէ ես ունեցել իմ իմ կեանքում մի քանի ոսկի բոպէներ — գրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մէջ ոգեւորված և բորբոքված վիճաբանութիւնները տեսում էին շատ անգամ մինչեւ գիշերվոյ ժամը երկուսը... »

Այսպէս ահա սկսւա Ռքթրուսի լրագրական գործը: Մշակի հրատարակութեանն ամիս մ'առաջ հանեց համեստ յայտարարութիւն մը, ուր ոչ մէկու լրայ շանթեր կ'որոտար, և ոչ մեծամեծ խոստումներ կ'ընէր. այլ

պարզապէս թէ « Պէտք է մշակել, պէտք է աշխատիլ, աշխատիլնք »: Ժողովուրդը յայտարարութեանց շատ ակննջ չի կախեր, և ոչ Արեւմտեայ անունն ձգուեցաւ. 50 բաժանորդ նորածին Մշակը կը քաջալերէին. անոր բովանդակութիւնը, հիմնադրին առաջնորդող յօդուածները, կարելի չէր որ հասարակութիւնը անտարբերութեան մէջ թողուին, տարին չըլուրած Մշակ կարպացողներ 500 եղան:

Մշակի առաջին համարներէն տեսնուեցան Զարուճի (Ամերիկեան) սրամիտ ֆելիետօնները, Բաֆֆիի Պարսկաստանի հետաքրքրական նամակները, որոնց տակ կը ստորագրէր Ալէքսանդր Բաֆֆի, Շահվերտեանի՝ ներքին կեանքի վերաբերեալ տեսութիւնները, Պահլաւունայ (Պիրն Պոռոյանի) երեւանեան լիցիակցութիւնները, իզմալլեանի՝ արտաքին տեսութեան գեղեցիկ յօդուածները, իրական կեանքէ առած՝ Չմկեանի գրած պատկերները, Ալէքսանդր Քիշմիշեանի վէպիկները, Համալի (Սոնգուկեանի) ֆելիետօնները, « Համալի մաղահաթ » վերնագրով, Ստեփանոս Պալասանեանի գրական և մատենադասական յօդուածները, Անդրեաս Ռքթրուսի արտասահմանեան լիցիակցութիւնները, և այլն:

Հետաքրքրական է թէ Բնչ կ'ընէ Ռքթրուսին առաջին յօդուածով, որու վերնագիրն է « Երէկ, այսօր և էգուց »: Բնչ էր երէկ հայ ժողովուրդը. — յեցած իրեն փառաւոր անցելուն, առասպելական աւանդութեանց վրայ, գոհ էր փառասիրական զգացմամբ. իր տղոց հետ կ'աշխատէր մայրենի լեզուով չլսօսիլ, նիւթական ուրիշ օգնութեան համաներ կամէր չունէր. ժողովուրդն ալ կը խնայէր կօպէկը իր երեխային համար հայերէն գիրք մը գնելու: « Երէկվայ օրը անցաւ »:

Այսօր ամէն տեղ կը սկսին փոքր ի շատէ հայերէն սորվիլ: Դպրոցներ կը հիմնուին, համալսարաններ կը յաճախուին, կենդանի լեզուով օրագիրներ և գրքեր ունինք. բանաստեղծութիւն, պատմութիւն երեսան կ'ելլան:

« Ուայց եղուցվայ օրը մօտենում է »: Վաղուան օրը կը պահանջէ փոքր սերուն.

դեան համար տարրական ուսում, ժողովրդական համար ժողովրդական գիտութիւն, ուսանելներուն՝ ճիշտ գիտութիւն, հասարակութեան՝ ճիշտ գիտութեան վրայ հիմնուած մտածելու եղանակ, — ամենուն աշխատանք :

Ահա համառօտ յիշատակութիւն մը Արծրունիյ առաջին յօդուածին . սակայն կարելի չէ մեր այս սուղ տեսութեան և կենսագրականին մէջ մի առ մի հետեւել իր յօդուածներուն, նա անընդհատ քսան տարի գրեց, բեղմնաւոր միաբեր չպարհեցաւ երբեք իր սկսած գործին առջեւ. գեղեցիկ հասարակ մի պիտի բլլայ Արծրունիի քսան տարուան առաջնորդող յօդուածներուն համաբաժոյն, որուն գաղափարն ալ շատեցն մտածուած է : Չանանք ուրեմն աղօտ նկարագիր մը, ուրուագիծ մը տալ իր բնականորէ գործունէութեան հետեւելով թ. Մարութեանի գրուածքին :

Արծրունի շատ կանոնաւոր ոճով յօդագրած է ժողովրդեան և ազգին կարեւոր խնդիրներն : Որ և է գաղափար յայտնելէն առաջ, հարկաւոր էր իրեն պարզել այն հարցը, թէ ինչ լեզուով պէտք է խօսիլ ժողովրդեան հետ, որ նա հասկնայ :

Լեզուի խնդիրը Արծրունիի գործունէութեան առաջին քայլին կը տեսնուի. բնական է թէ նա լեզուի կանոն տալու կարողութեամբ օժտուած չէր, յայտնի է դարձեալ թէ ժողովրդեան համար գրող Արծրունիին պիտի հալածէր գրաբարը, սակայն աշխարհաբարն ալ մշակելու շունչը գիտութիւն . շատ անգամ իրեն դէմ ձայն բարձրացուցին եւրոպական բառեր և ռամկարարութիւն գործածելուն համար : Իսկ մայրենի լեզուն ստիկեցնելու խնդրոյն ջերմ պաշտպաններէն մին հանդիսացաւ :

Երկրաստար զիտեակունոց ցործունեութեան խնդիրը, Մշակի առաջին համարներէն կը սկսի, Արծրունի ուժգին կը խորապահէ սոյն գասակարպը որ իրենց ամբարած գիտութիւնը անգործութեամբ կը ժանգոտեն, և զերեւեց բարձր համարելով, կը խորշին ժողովրդէն, մայրենի լեզուէն :

Ընտանիքի վերահարգութեան համար

պաշտպան եղաւ իւրաքանչիւր անգամից իրաւունքին, բողոքեց ծնողաց իրենց որդեաց դէմ բրած բռնութեան, և կանանց իւրաքանչիւր, կնոջ հաստատութիւնը և անոր կրթութեան կարեւորութիւնը բարոյեց. առնոց հետ Արաւսարգանի խնդիրն ալ գրողեց :

Գրադպակն խնդիրը շատ անգամ շօշափեց Արծրունի եռանգուն յորդորներով, ուսումնարաններու մէջ եւրոպական մանկավարժներու գրութիւնները մացնելու վարժապետանոցներ, արհեստագիտական պարտիզներ հիմնելու գաղափարները շատ անգամ կրկնեց :

Եկեղեցւոյ խնդիրը յուրեւ ալ և ալ տեսակէտներով. օտար սկիզբներէ բարոյեց կրօնական բովանդակեց մէջ : Մակայն սորկացուց կրօնի համար չատել և չհալածել գիրար, նոյն իսկ օտարակցն ալլազոյն բանալ իրեն պարտը, արարածը անոր վրայ ալ լուսաւորութեան խնամքը :

Տեսնական խնդիրներով զբաղել զանց չէ բրած Արծրունի. հայ գիւղացւոյն և արհեստաւորին լուսաւոր խորհուրդներ տալ, փոքրիկ գրամատուներու, խնայողական արկղի և ալլ հաստատութիւններու առաջարկութեանց կը հանդիպինք իր յօդուածներուն մէջ :

Բայց ամենէն աւելի թիւրաց Հայաստանը Արծրունիի քննութեանց առարկան դարձած է, և Պոլսոյ մամուլը, գրականութիւնը և Ազգային ժողովը իրեն խիստ դատաստաններուն ենթարկած է : Յիշենք Մշակէն արտասպած առանձին մի գիրքը «Թիւրքաց Հայերի տեսնական դրութիւնը» :

Որիչ երկու գրքեր ալ ունի Արծրունի առանձին լոյս տեսած. «Այն տեղ և այս տեղ, ուսանողական սպաւորութիւններ», 1890ին տպուած. և «Լիւթիւս հոգեբանական էջիւն, հայերէն մի անտաղ ձեռագրից», 1891ին. վերջոյս վրայ ազգային թերթերը քննադատութիւններ ալ բրին :

1. Նոր դար, Թ 129 (1891). — Մարտ, Թ 12 (1891). — Հայրենիք, Թ 110 (1892). — Մեծաւա, Թ 2292 (1892). — Արեւելեան մամուլ, Թ 2 (1892) :

Արծրունիի գործունէութիւնը կապուած է ժամանակին պատմութեան հետ. իր հեղինակութիւնը ժողովրդեան մէջ ամենամեծ եղաւ. բաւական էր միայն անոր յորդորանքը, և ահա հազարներ կը թափէին յօգուտ տանկահայաստանի սովեալեանքու, Իսֆէի ընտանեաց և մեծնող բանաստեղծ Պատկանեանի։ Ջիւրը պաշտող ժողովուրդը չվարանիր ձայնին հետեւելու կաթողիկոսական ընտրութեան մէջ և պատգամաւոր այնպիսի ազգու անձ մը ընտրել։ « Բանձին Արծրունիի, կ'ըսէ ոռու թերթ մը, կորուսին հայերը իրենց առաջին և միակ հրապարակախօսը, որու նման չեն ունեցած իրենց պարեւոր գոյութեան ընթացքին միջև Նա գիտէր բանորով բոցավառել մարդկանց սրտերը։ Քսան տարիներէ աւելի իրբու ինքնակամ իշխան իր ետեւէն կը տանէր ամբողջ երիտասարդ սերունդը, կը ղեկավարէր հայերու բոլոր մտաւոր շարժումները և իր ետեւէն կը քաշէր թշնամիներն անգամ, որոնք չէին կրնար զիմանալ անոր մեծ, մաքուր և ազնիւ տաղանդը։ Հրապոյրին։ Արծրունիին միակն էր որ կը հասկընար կտրուկ, տաք և ուղղակի կերպով գնել հասարակական հարցերը և անոնց պատասխանել մոլեռանգութեան չափ համոզուած յափշտակութեամբ և առանց նկատումներու »։

Կ'ուզենք կնքել մեր կենսապրականը Շիրվանզատէի զեղեցիկ խորհրդածութիւններէն մաս մը մէջ բերելով... « Քի մէջ մարմնացած էր պարաւոր բողոքը որ ազգի, որ իր ճակատադրի գէմը շատ բան ունէր տեսնու։

Էւ զու կոչած էիր նրա ներական զգացմանց կենդանի թարգմանը լինելու։

Այդ էր քո գործութեան բուն հիմքը։ Դու խիստ էիր խաւարի գէմը կուշում, և ուրիշ կերպ չէր կարող լինիլ։ Քի սիրտը և հոգին թելապրում էր քիզ, թէ միայն ուժին հաւանութեամբ կարելի է յաղթել թշնամուն։

Դու խօսում էիր թունաւոր լեզուով, որովհետեւ այդ թոյնը միայն կարող էր ոչնչացնել ամբողջ բարոյական աղանդութիւնները։

Դառն էր քեզ համար այդ կոխը, բայց և հանելու։ Քի գրչի ծալքը ամէն անգամ թաթախում էր քո սրտի արիւնում և այնպէս հրապարակ կուրո գաղի...։

Դու համաշխարհային աստղ, անզուգական հանճար չէիր, բայց լաւ ճանաչեցիր ժողովրդի գրութիւնը և արեցիր այն, ինչ որ պահանջում էր ժամանակը։ Ահա ինչու քո անունը պէտք է Հայոց անմահների գտոր մտնէ և պատմութեան մէջ գրաւի նախանձեղի տեղը...։

Քի կենսիցի վերջին տարիները մի խրատական փաստ է քո յաջողութեան համար։ Հայ ժողովուրդը քեզանով ջնջեց իր ճակատից ապերախութեան այն կնիքը, որ շատերն էին կրողում միտակ, Նա քո գործերը զնահատելով առատ ձեռքով ապացուցեց, որ որքան նա ժլատ է, այնքան էլ երբեք առատաձեռն է գէպի իր մտաւոր աշխատաւորները, թող միայն այդ աշխատաւորները գործեն ազնւարար, անշահախնդիր հպով և անշեղ համոզմունքներով, ինչպէս զու գործեցիր...։» Ը. Գ. ՉԲԱՔԱՆ



Խմբագրատեղ
Ս. ՔԱԼԱՆԹԱՐ

է զիմէ հետեւեալ հասցէով. ТИФАНСЬ, Редакция «МПАКЪ» իսկ արտասահմանից՝ ТИФ-LIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. « Մշակ »-ի տարեկան գինը 10 բուբլի է, տառն է մէկ և տասն ամսականը՝ 9 բ., ինն և ութ ամսականը՝ 8 բ., եօթ ամսականը՝ 7 բ., վեց ամսականը՝ 6 բ., հինգ ամսականը՝ 5 բ., չորս ամսականը՝ 4 բ., երեք ամսականը՝ 3 բ., երկու ամսականը՝ 2 բ., և մի ամսականը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 րոպլար. եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդը՝ 10 րուբլ.։

« ՄՇԱԿ »-ի գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՐԱՆԸ (Բաղադրաբար և Բարենկայա փողոցների անկիւն) — Կայսրութեան ուրիշ քաղաքներէն « ՄՇԱԿ »-ին գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս պէտք է զիմէ հետեւեալ հասցէով. ТИФАНСЬ, Редакция «МПАКЪ» իսկ արտասահմանից՝ ТИФ-